

ԽՈՐԷՋ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Մաշտոցի անվան մատենադարանի նախաձեռնությամբ Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատարակչությունը հրատարակել է պատմ. գիտությունների դոկտոր Ասատուր Մնացականյանի «Աղվանից աշխարհի դրականության հարցերի շուրջը» փաստալից և ուշադրավ ուսումնասիրությունը: Խորագիրը թեև կոնկրետ է, բայց աշխատության մեջ քննված են դրական շրջանակներից դուրս պատմա-աշխարհադրական բնույթի հարցեր: Ընդհանրապես ճիշտ է վարվել անդրադառնալով «կողմնակի» այդ հարցերին, որովհետև նրա նշանախնդրաբան խնդիրների լուսարանման ընթացքը օրինաչափորեն կապվում է դրանց հետ, առանց որի նա իր նպատակին չէր կարող լրիվ հասնել: «Հեղինակի կողմից» բացատրականում այդ պարագան ճիշտ կերպով նա նախադրուշացնում է ընթերցողին:

«...Պատմա-քաղաքական իրադարձությունների պատճառով, Հայոց Արևելից կողմանքը, 4-րդ դարի վերջերին միակցվելով բուն Աղվանքին, ուղղակի կոչվել է նաև Աղվանք: Մեզ հետաքրքրող դավառների այս հորջորջումը, ունենալով լոկ աշխարհադրական իմաստ, հետագայում հիմք է հանդիսացել մեծամեծ շփոթությունների: Այդ պատճառով էլ միմյանց հետ շփոթված բուն Աղվանքն ու Հայոց Արևելից կողմանքը դիտվում են որպես միայն աղվանական ցեղերի և նրանց հայրենիքի հետ կապված հասկացողություններ: Հետևապես տարբեր եղանակներով անտեսվում է պատմական Հայաստանի վերոհիշյալ դավառների հայկականությունը, ինչպես պատմական, այնպես էլ էթնիկական առումով:

Քնականաբար, սույն մենագրության մեջ մենք, նախքան բուն խնդիրն, այսինքն, Հայոց Արևելից կողմանց դպրության քննության անցնելը, պիտի անդրադառնալինք պատմա-աշխարհադրական և էթնիկական բնույթի մի քանի էական հարցերի պարզարանմանը: Այդ նպատակին է ծառայեցված մենագրության «ներածական»-ը» (էջ 5—6):

Աշխատությունը հիմնականում բաղկացած է երկու մասից՝ Ներածություն (էջ 7—86) և Հայոց Արևելից կողմանց 5—13-րդ դարերի դպրությունը (էջ 87—239): Այնուհետև տրված է ուսումնասիրության ամփոփումը (էջ 240—249), Աշխատությանը կցված է նաև «Հավելվածներ» բաժինը (էջ 250—263), որի նյութերը դարձյալ կապվում են Ներածությունում քննված հարցերի հետ, բայց որովհետև սրանք մասնակի բնույթ ունեն, հեղինակը նպատակահարմար է գտել դրանք մանրամասն տալ ընդհանուր շարադրանքից առանձին, շարադրվելիք կոնկրետ հարցերի քննությունը չձգձգելու նպատակով: Աշխատության վերջում զրված են աղբյուրների, դրականության՝ տպագրված և անտիպ (էջ 264—270) և հատուկ անունների (էջ 271—284) ցանկեր:

Ներածության սկզբում (էջ 7—19) համառոտակի կանգ առնելով աղվանական դրի և դպրության ուսումնասիրության պատմության վրա, հարցի քննությունը հեղինակը այնուհետև տանում է ժամանակադրական երկու հատվածներում՝ ա) սկզբից մինչև 4-րդ դարի երկրորդ կեսը, բ) դրանից հետո, մինչև աղվանական ցեղերի վերանալը» (էջ 18): Այստեղ հեղինակը ցույց է տալիս, որ մինչև 387 թ. անտիկ հեղինակները որոշակի տեղեկություններ են տալիս Հայաստանի և Աղվանքի աշխարհադրական սահմանագծի մասին: 387 թ. երբ Հայաստանը բաժանվեց Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև, վարչական նոր բաժանմամբ բուն Աղվանքի կազմում մտան Հայաստանի արևելյան կողմի մի քանի գավառները՝ Ուտիք, Արցախ և Գարդման, որոնք մեր մատենագրության մեջ կոչվել են Հայոց Արևելից կողմանք: Վերջինիս բնակչության հիմնական դանդաղածը եղել է հայությունը: Որոշ ուսումնասիրողներ անտեսելով այս փաստերը՝ հախուռն կերպով, փաստերի առանց խորէջ վերլուծության Հայոց Արևելից կողմանքը ներկայացնում են բուն Աղվանքի հետ, որպես աշխարհադրական մի հասկացություն, դրանով իսկ անտեսում են լիարժեք լայնորեն բնիկ հայերին և նրանց խաղացած կենտրոնական դերը Աղվանքի մշակութային կյանքում: Այդպիսի ոչ ճիշտ պատկերացման կուտակված թանձր շերտը ցրելու համար հեղինակից մեծ ջանքեր է պահանջվել՝ հետախուզել անտիկ հեղինակների՝ Պլուտարքոսի, Պլինիոս Ավագի և մասնավորապես Ստրաբոնի և այլոց, ինչպես նաև հայ հեղի-

նակների՝ Մովսես Խորենացու, Բուզանդի, Մովսես Կաղանկատվացու, Մատթեոս Ուռհայեցու և ուրիշների աշխատությունները և լեռնել տասնյակ փաստեր, որոնք անառարկելիորեն ցույց են տալիս, որ բուն Աղվանքից պետք է տարրերել հետազայում նրա մեջ մտած Հայաստանի Արևելի կողմա՝ կամ Հայաստանի արևելյան մարզերը, որոնք կազմում են Կուրի աջափնյա հողերը։ Հետևապես հետո՝ մինչև 387 թ. Հայաստանի բաժանումը երկու մասի, Աղվանքի և Հայաստանի սահմանը, ինչպես նշել են անտիկ հեղինակները, հանդիսացել է Կուր գետը (էջ 38), որը հեղինակը համարում է զրացի երկու երկրների ռավանդական սահմանագիծը» (էջ 48)։ Հեղինակը ապա հիշեցնում է, որ այդ սահմանագիծը տարրեր ժամանակներում ռեզ-տեղ անցել է Կուր գետը և դեպի հարավ (այսինքն հայկական հողերի միջով—Վ. Հ.) և դեպի հյուսիս (այսինքն աղվանական հողերի միջով—Վ. Հ.)» (էջ 48)։ Ահա այս մասին աշխատության մի շարք էջերում (էջ 48—55), բազմաթիվ փաստերի օգնությամբ ցույց է տալիս, որ Կուրի ձախ ափին գտնվող Կամրեճանը և հարակից տարածությունները, որոնք տարածվում էին մինչև Կովկասյան լեռները, դարձյալ Հայաստանի մասն են կազմել, և այդ վայրերը պայմանական ձևով կոչում Անդրկուրյան Հայք։ Հեղինակը դարգացնելով իր միտքն այս հունով և անցնելով Պլուտարքոսի և Աշխարհացույց-ի տվյալներին, ցույց է տալիս, որ այդ տարածություններում ևս գտնվել է մի վայր, հայտնի Փոքր Հայք անունով, ի տարրերություն Կապադովկիայի Փոքր Հայքի։ Փաստերի նոր լույսի տակ Պլուտարքոսի համապատասխան վկայությունը հասկանալի է դառնում, այն է՝ 65/64 թթ. (ն. մ. թ.) դեպի Կասպից ծով նախատեսված, բայց չիրականացած արշավանքից Պոմպեոսն իր զորքով վերադառնում է հանգստանալու Անդրկուրյան Փոքր Հայք։ Որքան մեզ հայտնի է հայագիտական գրականության մեջ այս բացատրությունն առաջին անգամ հանդես է գալիս ուսյն աշխատության մեջ, Կամրեճանը և ռեզհանրապես Անդրկուրյան Հայքը Հայաստանի մաս կազմելը հարցի մի կողմն է։ Հարցի մյուս կողմը այդ վայրերի քնակ-յության լիթնիկական կազմն է։ Եվ ի պատիվ հեղինակի պետք է ասել, որ նա դարձյալ մի շարք փաստերով (էջ 58—59) ցույց է տալիս, որ տեղի բնակչությունը եղել են հայերը։

Ապա հեղինակն անցնում է այդ վայրերի, ինչպես հայագիտության մեջ է նշվում, Հայկա-կան Աղվանքի, բնակչության անգիր դպրության հարցի քննարկմանը (էջ 60—67)։ Այդ քննու-թյունից պարզվում է, որ այստեղ ևս տարածված են եղել Արա Գեղեցիկի և Շամիրամի, Անա-հիտ աստվածուհու, Աստղիկ դիցուհու և Թագուհի նահատակուհու մասին եղած գրույցները և վայրերը։ «Այսպիսով,—եզրակացնում է հեղինակը,—այդ փաստերը միասին գալիս են ապա-ցուցելու համապատասխան դիցարանության, ուստի և համապատասխան պաշտամունքի առկա-յությունը հայության այդ մեծ հատվածի մոտ» (էջ 61—62)։

Աշխատության 67—82 էջերը նվիրված են 387 թ. Հայաստանի բաժանումից հետո մինչև 9-րդ դարը ստեղծված իրադրությանը Աղվանքում, երբ Ասսանյան Պարսկաստանի խորամանկ և նենդ քաղաքականության հետևանքով այն զրկվում է սեփական պետականությունից և հան-դես է գալիս Միհրանյան տոհմը։ Նշելով սրա հանդես գալու պատմությունը, պատ-մական ասպարեզից դուրս գալու և հայանալու, հեղինակը իրավացիորեն գրում է, «Ուշա-գրավն այն է, որ այդ հաշիվներից լուրորովին դուրս են գտնվում բուն աղվանները, նրանց անունն իսպառ չկա։ Եվ դա պատմական իրողություն էր, որովհետև նրանք այդ ժամանակ ար-դեն, լիթնիկական առումով համարյա յրիվ վերացել էին, իսկ դրանից առաջ, սկսած Վաչագան 3-րդի մահից, ինչպես տեսանք դուրս էին գտնվում պետական գործունեության ղեկավար դիր-քերից։ Հանգամանքը, որը պայմանավորված էր աղվանական ցեղախմբերի ոչ միասնականու-թյամբ, նրանց տարալեզու և տարակենցաղ իրականությամբ նաև հայկական միջավայրի հզո-րույթյամբ, գրով, գրականությամբ և առհասարակ պատմա-քաղաքական, լիթնիկական-տնտեսա-կան ալլուալլ հանգամանքներով։ Եվ միանգամայն օրինաշափ է այն ընթացքը, որով պարսիկ Միհրանյանները ոչ միայն աստիճանաբար, բրիստոնյա դառնալով, հայ լեզվին ու դպրությանն անցնելով, հայանում էին. այլև դուրս մղվում պետական-քաղաքական դիրքերից, իրենց տեղը դիչելով տեղի հայկական տարրին, երկրի կենտրոնական մարզերի (Անդրկուրյան Հայք, Ու-տիք, Բարդան, Արցախ) իսկական տերերին» (էջ 79—80)։

Աշխատության երկրորդ մասը նվիրված է դպրության հարցերին՝ սկսած 5-րդ դարից մինչև 13-րդ դարը։ Հեղինակն այստեղ էլ իր տարերքի մեջ է։ Լինելով ճանաչված ձեռագրագետ և քաղաքական միջնադարյան հայ մատենագրության տարրեր մարզերին՝ պատմագրություն, զեղարվեստական, քերականական, կանոնական, աստվածաբանական, դավանաբանական և այլ գրականության՝ նա իր ապացույցների համար այդ հսկա ծովում անկաշկանդ անցումներով մեկիկ-մեկիկ հավաքել է անթիստելի ոչ սակավ փաստեր, և ցույց տվել, որ Աղվանից աշխարհի պրականությունը ժնայած հենց սկզբից պիտի զարգանա երկու լեզվով, բայց զարգացել է

փաստորեն մեկով, հայերենով» (էջ 113), որովհետև «աղվաններն զիրն ու գրականությունը երկար չի գոյատևել» և «չի ունեցել պետական, եկեղեցական նշանակալից դեր, ուստի և նրանից այնքան աննշան փշրանքներ են միայն պահպանվել» (էջ 94)։ Ելնելով սրանից, հեղինակը հավաստում է՝ «Աղվանից աշխարհի պետական-պաշտոնական հիմնական զիրն ու գրականությունը եղել է հայերենը» (էջ 95)։ Աշխատության այս մասի փաստարկումների ուղև ու ծուծը այս դրույթն է։ Եվ այս բաժնի 5 դրվագների ժամանակագրական պարբերացմամբ քննված նյութերը նվիրված են այդ հարցի լուսաբանմանը։ Հեղինակը, անշուշտ, հասել է իր նպատակին։ Այս առումով մատենագրական այնպիսի գործերի, ինչպես 'Դավթակ Քերթոզի, Համամ Արևելցու աշխատությունների, Գյուտ կաթողիկոսի, Արրահամ Մամիկոնեից եպիսկոպոսի նամակների, Վաչագանի, Սիոնի (Պարտավ) կանոնների, Գոշի երկերի և նման այլ գործերի քննությունը հեղինակի ինքնատիպ գիտողություններով և ելրակացություններով արժանի են գրական գնահատականի։ Հենց յոթերորդ Զիվանշիրի սպանության առթիվ 'Դավթակ Քերթոզի Ողբը, որն իբր աղվաններից է թարգմանվել հայերեն։ Հեղինակն անառարկելի փաստերով և երկաթյա տրամաբանությամբ ցույց է տալիս, որ այն թարգմանությունն է, այլ դրված հայերեն (166—171)։ Նույնը կարելի է ասել Համամ Արևելցու մեկ թե երկու տարբեր անձնավորություն լինելու և որա մատենագրական վաստակի քննության մասին և այլն։ Այստեղ հնարավոր չէ նշել աշխատության գրական այլ կողմերը և քննված բազմաթիվ այլ հարցերը, որոնց հեղինակն անդադարձել է և լուծել բավարար չափով։ Սակայն չի կարելի լուծյամբ անցնել հեղինակի գրած այն էջերի կողքով, ուր նրա միտքը փայլատակում է մի շարք գիտնականների առանձին դրույթների վերաբերյալ քանակի ճշգրիտ։ Սույն աշխատության գրական կողմերից մեկն էլ այն է, որ վեճի առարկա հանդիսացող որևէ հարցի առնչությամբ հեղինակը բազմաթիվ փաստեր ի մի բերելով, քննությունը հասցնում է մինչև վերջ և ընթերցողին համոզում իր մտքերով։ Ահա նման օրինակներից մի-երկուսը։ Բարգեն։ կաթողիկոսի «Թուղթ Հայոց ի Պարսս առ ուղղափառս» նամակի վերջում կա այսպիսի միտք. «գրեցաք իսկ ձեզ (Պարսկաստանի քրիստոնյա ժողովուրդներին—Վ. Հ.) յառաջագոյն, Վրաց և Աղուանից միաբանութեամբ իւրաքանչիւր աշխարհի գրով»¹ (ընդգծումը մերն է—Վ. Հ.)։ Պրոֆ. Ա. Շանիձեն ընդգծված հատվածը թարգմանել է այսպես. «в согласии с Грузинами и Албанцами, каждый на своем языке (букв. письменностью каждой страны)»², այսինքն՝ վրացերեն և աղվաններեն։ Ուրեմն Բարգեն կաթողիկոսը Պարսկաստանի քրիստոնյա ժողովուրդներին ուղարկել է նամակ՝ գրված վրացերեն և աղվաններեն։ Սա է պրոֆ. Շանիձեի թարգմանության միտքը։ Այս ընթերցումն ինչքան էլ հավանական թվա, տարօրինակ է հնչում։ Եվ մեր հեղինակը քննելով այդ վարկածը, գտնում է, որ ճիշտ չի հասկացվել Բարգեն կաթողիկոսի նամակի ընդգծված հատվածը, և պետք է այն թարգմանել այսպես. «առաջուց գրել էնք սլատասխան՝ վրացիների և աղվանների գիտությամբ՝ ձեզանից յուրաքանչյուրին՝ իր աշխարհի լեզվով»³ (էջ 13)։ Միանգամայն տրամաբանական և համոզվեք ընթերցում։ Այսինքն նամակը գրվել է Պարսկաստանի քրիստոնյա ժողովուրդները դրով, իսկ առաջին նամակից իմանում ենք, որ նամակը գրվել է նաև պարսկերեն և հայերեն⁴։ Մի այլ օրինակ. Զ. Բունիաթովը մեղադրում է Մխիթար Գոշի Դատաստանագրքի հրատարակիչ Վ. Բաստամյանցին, այն բանի համար, որ հրատարակիչը սխալ է կատարել, երբ Դատաստանագրքի նախադասությունն ավելացրել է «Հայոց» բառը, որը ձեռագրերում չի եղել «Մխիթարայ Գոշի Դատաստանագիրք Հայոց»։ Միանգամայն ճիշտ են հեղինակի փաստարկումները, որ նշված վերնագիրը վերաբերում է Վ. Բաստամյանցի ուսումնասիրությանը, իսկ բուն Դատաստանագրքի վերնագրում նման նշում չկա։ Մեր կողմից կավելացնենք։ Կանոնագրքի ձեռագրերում էլ բացակայում է «Հայոց» բառը, ուրեմն չպետք է ասենք «Կանոնագիրք Հայոց» և վերջինս հանենք հայ մատենագրության ցանկից։ Կամ վերցնենք Զ. Բունիաթովի այն մեղադրանքը, որ իբր հայ հոգևորականները աղվանական գրական հուշարձանները նախ թարգմանել են հայերեն, ապա ոչնչացրել։ Այս դրույթի համար նա ոչ թե փաստեր է բե-

1 «Գիրք Բղթոց», Թիֆլիս, 1901, էջ 48—51։

2 Նույն տեղում, էջ 51։

3 А. Шанидзе, Новоткрытый алфавит Кавказских албанцев и его значение для науки, Тбилиси, 1938, стр. 3.

4 Ավելի ճիշտ կլիներ թարգմանել այսպես. «Ձեզ իսկ գրել ենք առաջուց, վրացիների և աղվանների միաբանությամբ (համաձայնությամբ)՝ յուրաքանչյուրիդ (իր) աշխարհի գրով»։

5 Գիրք Թղթոց, էջ 47։

րում, այլ որպես հիմք նշում երկու ուսումնասիրողների կարծիքը (Մ. Орманиян, Армянская церковь, М., 1913, стр. 45, 118; С. Еремян, Идеология и культура Албании III—VII вв., «ԵՍ» Очерки истории СССР, III—IX вв., М., 1958, стр. 329): Մենք ևս ստուգեցինք նշված ուսումնասիրությունների համապատասխան լինելը, բայց նման բան չգտանք: Ձ. Բունիաթովի նշված կարծիքին ահա թե ինչպես է պատասխանում հեղինակը. «Ճիշտ է, աղվանից նորընտիր Սիմեոն կաթողիկոսը ոչնչացրեց Ներսես Բակուրի գրքերը, որոնք հերձվածողական էին, սակայն դա չի նշանակում, թե զրանով ոչնչացավ ողջ Աղվանքի գրականությունը: Հերձվածողական գրականությունը նույն դավաճությամբ ոչնչացվում էր նաև Հայաստանում և ամենուր. ինչու՞ հապա այդ երկրների գրականությունը մնաց: Չմոռանանք նաև, որ Ներսես Բակուրի գրքերն էլ, ինչպես կտեսնենք ստորև, հայերեն էին և ոչ աղվաներեն. իսկ նրանց ոչնչացնողն էլ Աղվանից աշխարհի կարողիկոսը» (էջ 164. Ընդգծումը մերն է—Վ. Ն.):

Մրանք փաստեր են, որոնց չի կարելի շրջանցել նորահայտ տեսություններով, ոչ էլ անտեսել կամ ունեղել: Եվ ոչ էլ հայ բանասիրությունն ու աղբյուրագիտությունը որքի գլուխ է, որ ով գանկանա նրա վրա դավաճություն սովորե...: Տեղին և դիպուկ դիտողությունների և ճշտումների հանդիպում ենք Կ. Վ. Տրեբերի երկու վարկածի վերաբերյալ (էջ 23—26 167—168) և այլն:

Իհարկե, նման գրույթների քննությունը սույն աշխատության մեջ նշվածներով չի ավարտվում, սակայն բավարարվենք վերևում բերվածով:

Կարելի է այս ձևով երկար գրել և բազմաթիվ փաստեր բերել ցույց տալու սույն աշխատության դրական այլ կողմերը և զանազան հարցերի լուսարանման բավարար արդյունքները: Այդ ուղղությամբ ընդհանուր գծերով վերևում շարադրածն էլ թերևս բավական է:

Իսկ ի՞նչ կարելի է ասել մեր քննած սույն աշխատության թերությունների մասին: Այն հարցերը, որ իր ուշադրության նշանախեցն է դարձրել հեղինակը, դրանց քննության և լուսարանման մեթոդները, ինչպես նաև եզրակացությունները մեր կողմից առարկության չեն հանդիպում: Միայն կցանկանայինք փաստական և այլ կարգի որոշ դիտողություններ ու ճշտումներ կատարել հեղինակին օգնելու նպատակով:

Ահա դրանք.

1. Խոսելով Մաշտոցի մեծ գլուխի մասին հեղինակը գրում է. «Մեսրոպ Մաշտոցը Աղվանից աշխարհում հիմնում է երկու դիր և երկու դպրություն. ա) Հայկական — հայերի համար, բ) Աղվանական — աղվանների համար» (էջ 240, տե՛ս նաև էջ 88. Ընդգծումը հեղինակինն է—Վ. Ն.): Կարծես ստացվում է այն տպավորություն, թե հայերի համար դիր ստեղծելուց հետո Մաշտոցը պնացել էր Աղվանք, բացի աղվաններից նաև Հայոց Արևելից կողմանց հայերի համար նոր դիր և դպրություն հիմնելու: Իհարկե հեղինակն այդ կարծիքին չէ և գտնում է, որ այս վայրերի հայությունը ևս օգտագործելու էր այն դիրը, որ ստեղծել էր Մաշտոցը, ընդհանրապես հայության համար: Ձևակերպումը մի փոքր անհաշու է, այն թերևս ճիշտ կլիներ ձևակերպել այսպես. Մաշտոցը գնացել էր Աղվանք աղվանների համար դիր ստեղծելու, իսկ այնտեղի հայության մեջ իր նորագյուտ գրերի ուսուցումը կազմակերպելու համար, նման այն առաքելության, ինչ կատարեց նա բյուզանդական մասի Հայաստանում:

2. Աղվանքի այն ժամանակվա եպիսկոպոս Նրեմիայի մասին Կորյունի «Ի ձեռն առնալ վաղվադակի դաստուածային գրոց, թարգմանութիւնս ի գործ արկանէր» վկայության հեղինակի բացատրությունը մեզ ճիշտ է թվում, միայն անհրաժեշտ է մի փոքր ուղղում կատարել: Այս մեջբերման մեջ հեղինակը «թարգմանութիւն» բառը չի հասկացել ժամանակակից իմաստով, ինչպես թարգմանված է⁷, այլ մասսայականացում: Եվ դա ճիշտ է. «Կանոնապիտը Հայոց»-ում նշված բառը երկու անգամ հանդիպում է Բարուկ իմաստով⁸ համապատասխան հունարենի չա՛ռ բառին⁹: Ուրեմն 5-րդ դարում և հետո «թարգմանութիւն» ասելով հասկացել են նաև քարոզ, բեմասացություն: Բառի այս իմաստը մեզ համար նոր է վերականգնվում: Այժմ մեր ձեռքի տակ այլ փաստեր կան այդ մասին. օրինակ, Հովհ. Սանեցու մի աշխատության մեջ կարդում ենք «բայց ի թարգմանութեան նստելով քահանայիցն պատմիչ լինելով ժողովրդեանս»¹⁰:

6 Վարդ Մաշտոցի, Երևան, 1941, էջ 70:

7 Նույն տեղում, էջ 71—73:

8 Հատոր Ա, Երևան, 1964, էջ 154, 233:

9 Նույն տեղում, էջ XXII: Տե՛ս նաև էմ. Պիվազյանի «Մովսես Խորենացու պատմության մի կարևոր հատվածի թարգմանության մասին» հոդվածը «Պատմա-բանասիրական հանդեսում», 1963, № 2, էջ 266—268:

10 Գիրք թղթոց, էջ 228:

նվազապես «ձեր այսօրիկի ի թարգմանութեան նստին և արձակին երախայքն»¹¹։ Նշանակում է Կորյունից բերված վկայության մեջ «թարգմանութիւն» բառը պետք է հասկանալ քարոզ կամ ինչպես հեղինակն է բացատրում մասսայականացում՝ քարոզով մասսայականացնել աստվածային գրքերի բովանդակությունը։

3. Երուսաղեմի հայրապետ Հովհաննեսի նամակը Աղվանից Աբաս Եպիսկոպոսին¹² հեղինակի կարծիքով շարադրել է Երուսաղեմի Պանտա վանքի վանական Թովմասը. նա գրում է. «Պարզվում է, որ Թովմաս վարդապետը այդ գրությունը (իմա՝ նշված նամակը — Վ. Հ.) շարադրելիս եղել է Երուսաղեմի Պանտա վանքում» (էջ 107)։ Մենք չգիտենք, թե ինչ փաստերի հիման վրա է նա այդպես գրում, սակայն մի փոքր ներքև, միևնույն էջում հեղինակը գրում է. «Պարզվում է նաև, որ այդ գրության հորդորողն ու քաղվածողն էլ եղել է ոչ այլ ոք, քան վերոհիշյալ Թովմաս վարդապետը» (ընդգծումը մերն է — Վ. Հ.)։ Ուրեմն Թովմաս վարդապետը այդ նամակը գրել է հունարեն, հետո ինքն էլ թարգմանել է. Այս պնդումը անհնար է, թեև գրականության մեջ ենթադրվել է, որ այդ նամակը, ինչպես և նախորդ նամակները Աղվանք տարել է Թովմասը և ինքն էլ թարգմանել¹³։ Իսկ եթե առաջին քաղվածքում հեղինակն ուղղում է ասել, որ այդ նամակի շարադրման ժամանակ Թովմասը գտնվել է Երուսաղեմում, այն դեպքում մեջբերման շարադասությունն անհաջող է։

4. Երուսաղեմում գտնվող ս. Պետրոս վանքի մասին հեղինակը գրում է. «Հավանաբար գտնվել է Երուսաղեմում» (էջ 112)։ Ինչո՞ւ հավանաբար, երբ նույն էջում մեջ է բերում Անաստաս վարդապետի (7-րդ դար) նույն վանքի տեղագրության վկայությունը, որից երևում է, իսկապես, որ այդ վանքը գտնվել է Երուսաղեմում։ Եվ հետո, հեղինակը ենթադրում է, որ «Երուսաղեմում գտնվել են հայ միաբաններ, որոնք հարել են քաղկեդոնականությանը և գործակցել Թովմաս վարդապետի հետ» (էջ 112) և այդ վանքը դարձրել իրենց գործունեության կենտրոն։ Ավելի ճիշտ է ասել, որ այն ևս Պանտա վանքի նման սկզբնապես եղել է հայկական և հետագայում ընկել աղվանական քաղկեդոնիկների ձեռքը։

5. Աշխատության մեջ կան նաև կրկնություններ։ Ծիշտ կերպով բանավիճելով Զ. Բունիաթովի հետ, որ Եսայի Աբու Մուսեն, Համամ Արեւելցին, Ատրնեբսեհն հայեր են, կրկնված է աշխատության 83 և 191-րդ էջերում։ Նույնը կարելի է ասել 145-րդ էջում Զիվանշիրի աղոթքի գնահատման վերաբերյալ։

6. 46-րդ էջում վերապատմելով Մովսես Կաղանկատվացու մի վկայությունը, հեղինակը գրում է. «Պարսից Շապուհ արքան, 430-ական թվականներին...»։ Այս ժամանակ, ինչպես նշված է հեղինակի մոտ, Պարսկաստանում Շապուհ անունով թագավոր չի եղել, 420—438 թթ. թագավոր եղել է Վահրամ (կամ Վոամ) Գուրը, 438—457 թթ. Հազկերտ 2-րդը։ Գուցե տպագրական սխալի պատճառով 330-ը դարձել է 430։ Այս դեպքում խոսքը վերաբերում է Շապուհ 2-րդին։ Կան տպագրական սխալներ՝ էջ 147, 262 և այլն։

Աշխատությունը գրված է ջերմ շնչով, աղբյուրագիտական բանիմացությամբ և ճոխ լեզվով։ Ինչպես, արդեն, նկատած կլինի ընթերցողը, մեր գիտողությունները չեն շոշափում հեղինակի առաջ քաշած հարցերի լուծման սկզբունքները։

Քանի որ քննության ենթակա ուսումնասիրությունը իր բնույթով և ընդգրկումներով միայն հայագիտական գործ չէ, այլ այնտեղ շոշափված են համակովկասյան պրոբլեմներ, ուստի մեծ անհրաժեշտություն է նրա ուսերեն շուտափույթ հրապարակումը։

Վ. ՀԱԿՈՐՅԱՆ

¹¹ Զեռ. № 285, էջ 124 ա։

¹² «Արարատ», 1896, մայիս, Հավելված, էջ 252—256, հրատ. Կարապետ Եպիսկոպոս։

¹³ Ն. Ա. Կ. ի. յ. ա. ն, Թուղթ Մակարայ Բ Երուսաղեմի Հայրապետի առ Վրթանէս Եպիսկոպոսապետ Սիւնեաց յաղագս կարգաց եկեղեցւոյ, Վիեննա, 1930, էջ 48։